

71. ԴՑՈՒՆՑԱ-ՋԱԼԱԲԻ

Կէլնի, չէլնի մեյ խատ խեղճ մարթմ: Էսա մարթուն կէլնի մեյ խատ կնիկ, ինան մեյ խատ լաճ:

Էսա մարթն ի, զմեն օր կէրթա դաշտ՝ ցախ պանն կժողվի, կպիրի, կծախի, իդով էլ կապրին:

Ավուր մեկ էսա մարթն ի, գյեռ կնացե դաշտ էփեջա ցախ պանն ժողվե, արե մեկ ճոչ շլակմ, շլկե էլե, որ պիտի գյա տուն, ճամբախ բիրդանն ոտքեր կլպզտրա, կինի մեյ խատ քյանդալեմ, որ կլպզտրա, կինի էդա քյանդալեն դիզն էլ ոտքեր կառնի մեյ խատ սիվդակ քյարիմ, սարփից էդա սիվդակ քյար կկլորվի էնտեխ, մեյ խատ ծուկ կպանցվի էդա քյարի տակ:

Էսա մարթն ի, որ կտիսնա էդա ծակ, մեյ խատ կիրիշկա ներս, կտեսնա, որ ի՞նչ՝ յոթ էօդա կիրիվա ներս, էդա յոթ էօդի մեչ իլին լցուկ ոսկի, ջավահել, ակնունքյեղեն, պան են: Համա ուր շլակ կտփի գյետին, կմտնի ներս, կէրթա էդա շավահել, ակնունքյեղենից կլցի ուր էրկու ջվլներ, կանի խորոտ շլնկ, կշրջի, որ պիտի էլնի դյուս գյա, ի՞նչխ կանի, չկանա ճար կնտնե, որ էլնի դյուս, ըսկուն, որ լցե ջվլներ, էլ չի կիմիշե որ էդա ջվլներ դնարտկի: Հա կճոռթա, կպոռթա, որ խանի դյուս տանի, չի կանա, ըսկուն, որ իրիկուն կուտա վերեն:

Իրիկուն ի, էսա մարթ կտիսնա էն թանրաֆեն մեյ խատ դամ գյեռ փնչփնչալեն կուգյա:

Էսա մարթն ի, ի՞նչխ կանի՝ ճար չէլնե, կասի ինքյ ուր՝ «Հայիանամ, թող էսա դև գյա, աղաճանքյ կինեմ ինոր, կասեմ՝ գյեռ ես խեղճ եմ, մեյ քիչ էսա ոսկուց, ջահավելից տուր տանեմ, ես էլ խեղճ եմ, ապրեմ»:

Էսա դևն ի, կուգյա, առանց խարցուցելու, որ կտեսնա էսա մարթ մտե ուր խանզինեն, համան կխասնի վերեն, կվիրուցի կանի մեյ խատ կոեթ, կտփի պատ:

Էսա մարթու տղեն ի, կտիսնա որ էսա կիշեր ուր խեր չէկավ տուն, էն մեկէլ օր առատուն ի կէլնի վեր, կասի. - Էրթամ իմ խեր փտոեմ, տեսնամ խենքյ որ տեղն ի մնացե էսա կիշեր, չէլնի՞ մեյ պանմ էլե:

Էսա լաճն ի, առատուն կէլնի վեր, կինի ճանմբանխ, կուգյա, կտիսնա, որ ճանմխի վերեն ուր խոր պեռներ գյեռ էտտեղ թանլված մնացե, համան խեր չէրևա, կմոտախասնա, կտիսնա, որ ի՞նչ՝ խոր պեռներ բիթուն ոսկի, ջավահել, ակնունքյեղեն են: Հանմդա եէլ կտիսնա, որ ներս յոթ էօդա իլին պոկապոուկ էլմէլ ոսկի, ջավահել, ակնունքյեղեն են:

Էսա լաճն ի, ինքն էլ չկանա էսա խոր պեռներ պիրե, ըսկուն որ ծանդրը ի. կճոոթա, կպոոթաւ, կտիսնա, որ ճար չկա, կասի. - Աղե՛կ, ես քյե չեմ կանա տանե. խո մենքյ կանանքյ գյմ քյո մոտ. - կասի, կէլնի կէրթաւ ուր մերն էլ տնից կառնի, կուգյմ էտա տեղ. խորոտ էտա ոսկու էօդիհտերաց մեչ կապրեն:

Էսա լաճն ի, ինքյ բիթիւն գյմխ մի քյանի շապթով կէրթմ ավջութեն. չի գյմ տուն:

Ավուր մեկ օր էսա լաճ տուն չէլնե, դև կուգյմ ուր խմզիներն աչկ տալու. կուգյմ կտիսնա, որ մեյ խատ կնիյմ գյեռ մեչ ուր տներաց. մեչ ուր խմզիներն. կխարցուցի կնգյմն, կասի. - Խողածի՛ն, տյու ի՞նչ պմն ունես մեչ իմ խոդին:

Էսա կնիյն ի, բիթուն պմն կասի: Կասի. - Գյեռ իմ լաճ պիրեց զիկ ըստեղ. էսա էրկու շնպմթ էլ էլմվ, որ կնացե ավջութեն, չիւր մկա մլմ չիկե:

Էսա դևն ի, որ կտիսնա էսա կնգյմն ջահելութեն, խորոտկութեն, խարար կթալի էսա կնգյմն, կասի. - Քյանի որ էտասկնա իք, քյո լաճն էլ շնպթներով կէրթմ ավջութեն, անգյմն կուգյմ, արե մենքյ էլնենքյ իրիկ կնիկ: Եփ քյո լաճ կուգյմ, ես զաթի տնից կէրթմմ, եփ քյո լաճ կէրթմ, ես կուգյամ մեյդրա քեռֆ կանենքյ:

Էսա կնիյն ի, կամքյ կուտա գյեռ դևու խետ կէլնեն իրիկ կնիկ:

Կընցնի ժամանակմ. էսա կնիկ լաճմ կպիրի, ի՞նչխ անին, ի՞նչխ չանին, որ էսա լաճ չտիսնա:

Իրիկուն ի, որ դև կուգյմ տուն, էսա կնիկ էսա դևուն կասի. - Քյմ. մա՛րթ, մկա ի՞նչխ պիտի անենքյ, որ իմ լաճ չի գյմ էս տղին տիսնա, որ տեսավ՝ պիտի խարցուցի, ասի էսա վո՞վ ի, վե՞րն ի, էտասկնա պիտի անի:

Դևն ի, կասի. - Ի՞նչ պիտի անենքյ:

Կնիյն ի. կասի. - Իմ ճոչ լաճ շատ քթով տղայ ի, պիրենքյ էսա տղեն փաթիւթենքյ մեչ շորի. անենքյ կոնդմխ. առ տար դիր ճմմխու վերեն: Իմ լաճ կուգյմ, տղի լալու ծեն կառնի, սիրտ կքթա վերեն, կառնի, կպիրի կուտա զիկ. կասի՝ ա՛ռ մարե, էսա տղեն պահի, թող էլնի զիկ ախպեր:

Դևն ի, կասի. - Ի՞նչխ որ կիտես, ըսկուն էլ արա:

Կնիյն ի, կէլնի կպիրի քիչմ շոր-մոր, էսա տղին կփմթութի մեչ էդա շորերաց, կանի պստիկ կոնդմխմ. կուտա դևուն, կասի. - Դե՛, առ տար դիր վեր ճմմխին:

Դևն ի, կառնի կոնդմխ, կպիրի կդնի ճիշտ ճմմխի օրթեն:

Իրիկվան թարաֆան ի, էսա լաճ ավջութնից որ կդառնա տուն, կտիսնա վեր ճմմխին կլոր գյունդմ պմն, իդոր մեչեն էլ պստիկ տղի լմլու ծեն կուգյմ, կմոտոխասնա, կտիսնա. որ մեյ խատ պստիկ տղեմ մեչ շորերաց կուլա: Կվերուցի կառնի, կպիրի տուն, կուտա մոր, կասի. - Մարե՛, էսա տղեն վեր ճմմխին տրուկ էր, էկա տեսա, որ կողեր, սիրտս չիպե, որ թողնի էնտեղ, առի էկա, ա՛ռ պահի, թող ճոճմնմ, կանեմ զիկ ախպեր:

Մերն ի, շատ կուրախնա վեր էսա տղին, կտմնոնա ուր լաճուն կասի. - Խա՛, քյե մեռնեմ, քյո ուզածի պես կպահեմ:

Կընցնի գյեռ, ըսկնա տարեքյ, էսա պստիկ տղեն կտառնա չիւր տսնվէրկու տարեկան: Ավուր մեկ էսա կնիյն ի դևուն կասի. - Քմ մարթ, խերիքյ ի ըսկնմ գյմխսիկ մնանքյ, ի՞նչ կխասկնանքյ էսա ինլից, մարթ որ սմրբմնստ չէլնի ուր տան մեչ, ի՞նչ անեմ էն կյանքյ որ մարթ կապրի:

Էսա դևն ի, կասի. - Ինչխ անենքյ, որ սմրբմնստ էլնենք:

Էսա կնիյն ի, կասի. - Կիտես ի՞նչխ պիտի անենքյ. էսա իմ ճիչ լաճուն պիտի

մեկ կերպով կուրիսցուցես, որ մենքյ էսա տան մեչ սարբաստ էլնենքյ, թե չէ՝ ուրիշ ճար չկա, էլ անտանելի էի էսա կյանքյ:

Դևն ի, կասի. - Կնի՛կ, ի՞նչխ կէլնի էդասկնա պան. իմ ծեռ չէրթա՝ քյո բանբազիթ տղին սպանեմ, ավլաոս ի:

Էսա կնիյն ի, կասի. - Չէ՛, ի՞նչ անիմ ինոր բանբազիթութեն, որ մենքյ ընկնա գյախստիկ կապրինքյ նա՛ դուս կանանքյ անե, նա՛ ներա ի՞նչխ կանես արա. ինոր իմ աչիչ կուրիսցու:

Էսա դևն ի, կասի. - Աղե՛կ, քյանի որ դյու կասես կուրիսցու, էն որ քյո խալաչ լաճն ի, ես ի՞նչխ անեմ. զիկ խո իսկի պանն չի, մենակ թե ես ասի՝ ափսոս ի, բանբազիթ ի, թե որ կուզես քյո լաճուն կուրիսցուցեմ, կիտես ի՞նչխ պիտի անեմ: Էսա իրիկուն, որ քյո լաճ կուգյան տուն, ես կէլնեմ օց, կմտնեմ տան դռան շեմքյան տակ, խետ որ էկավ, ոտ պիտի թանի, մտնի տուն, ես ինոր ոտքյեր կկծեմ, կմեռցուցեմ:

Կնիյն ի, կասի. - Խա՛, էտասկնա շատ խորոտ կէլնի:

Էսա պստիկ տղեն ի, էսա պանն կլսի, կէլնի դուս, ճա աչկեր կկանացուցի տեսնա, խենքյ ուր ախպեր ե՞փ կուգյան տուն:

Իրիկուն ի, էսա ճիչ լաճ գյեռ ավշութնից կտառնա կուգյան, որ պիտի մտնի տուն, էսա պստիկ լաճն ի, կէրթա՝ ուր ախպոր ծոնածն, կասի. - Ախպե՛ր, պիտի գյանս իմ քյամակ, քյե շլկելով պիտի տանեմ չիր տուն:

Ճիչ ախպերն ի, կասի. - Ջա՛նմ, ախպեր, ի՞նչ կանես. զիկ ինչի՞ կշլկես, ախր չես կանա, դյու պստիկ ես ալյան, սորա մեչքդ տեղեն կէլնի:

Էսա պստիկ ախպերն ի, կասի. - Չէ՛, իլանքյ-բլանքյ պիտի գյանս իմ քյամակ:

Կուլան, կմոմոն, որ մանանթ:

Ճոչ ախպերն ի, կնանչանանն. ի՞նչ կանի, պստիկ ախպոր խաթր չի կոտրե:

Պստիկ ախպերն ի, կշլկի ճիչ ախպոր, կառնի, կպերի չիր տուն:

Էսա դևն ի, էլե օց, մտե շիմքյան տակ, կաչկի որ էսա լաճ գյան փանթութվա ոտքեր, կծի: Բիրդանն կտիսնա, որ պստիկ ախպեր ճիչ ախպոր շլկե կպերի տուն, կտիսնա, որ ուր լաճն ի, շեմքյից կընցնի, էլ դիուս չի գյան չիր էն մեկէլ օր:

Առատուն ի էսա ճիչ ախպեր կէլնի էլմ էլ կէրթա՝ ուր պանին, կէրթա՝ ուր ավշութեն:

Դևն ի, կուգյան տուն, կնգյան կասի. - Էսա չէլանվ, իրիկուն էլ կէլնեմ էլմ էլ օց, կմտնեմ դռան դռընցու մեչ, ես կիտեմ, էլմ էլ պստիկ լաճս պիտի ասի, թե էլմ էլ շեմքյան տակն ի, ճիչ ախպեր պիտի շլկի գյան, որ էկավ, էնգյանխ վերու դռընցու մեչեն ինոր վիզ կկծեմ:

Կնիյն ի, կասի. - Խուս, էտասկնա՝ դիա աղեկ կէլնի:

Պստիկ տղեն ի, էսա պանն, որ կլսի, էլմ էլ իրիկվան թարաֆ կէլնի դյուս, ճա՝ աչքեր կկանացուցի ըստեղ-էնդեղ խենքյ եկի կուգյան ուր ախպեր:

Դևն ի, էլե օց, մտե դռընցու մեչ, կաշկի որ էսա լաճ գյա:

Պստիկ ախպերն ի, գյեռ կտիսնա, որ ախպեր էն թանրանֆից կուգյան, ճաման կէրթա՝ դողրի ախպոր դիմաց:

Էսա ախպերն ի, որ կտիսնա ուր պստիկ ախպոր, կուրախնա վերեն, կպոնի կպաքյի, կասի. - Դե՛, քյեզե էրթանքյ տուն:

Պստիկ ախպերն ի, էլմ էլ աղաճանքյ կինի ճիչ ախպոր, կասի. - Ախպե՛ր, էրեկ ես քյե շլկեցի, էս օրն էլ դյու զիկ պիտի շլկես:

Ճիչ ախպերն ի, պստիկ ախպոր խաթր չի կոտրե. պստիկ ախպոր կառնե քյամակ, կէրթա տուն:

Էսա դևն ի, դռընցու կիրիշկա. հա տիսնա խենքյ ինի կուգյա. էսա լաճ ի, որ կէի, որ կուգյանն, էսա դևն ի դռընցու կտիսնա. որ ճիչ ախպեր պստիկ ախպոր շլկե գյեռ կուգյա:

Դևն ի կտիսնա. որ պստիկ ախպեր վեր ճիչ ախպոր քյամկին ի. էլմ էլ չի կանա կծի:

Վարհաալ էսա պստիկ ախպեր հնա հոչ ախպոր էսասկնա բալեքյդերաց կազատի:

Պստիկ ախպերն ի, կտիսնա որ ճար չկա, ուր ճիչ ախպոր պիտի յա սպանեն, յան պիտի ուտեն, էն մեկ օր ճիչ ախպոր կասի. - Ախպե՛ր, էսօր դյու մէրթան ավջութեն, արե քյե փնթյութիմ մեչ էսա խսրին, տանեմ դնեմ դռան իտև. թամաշա արա, տե՛ս վով կուգյան մեր տուն էսօր:

- Կիտե՞ս, - կասի էտա պստիկ ախպեր, - մեյ խատ դևմ կուգյան, կուգյան խետ մեր մոր քեռֆ կանի, որ քեռֆ կանի կպոծնի. որ կուգյան պիտի էրթան, դյու քյո նետվանեղ կլարես, մեյ խատ կզանես դևուն, որ կզանես դև չաբալամիշ կէլնի: Չանբալանմիշ էլնելուց սորա, կտառնա քյե կասի՝ բանբագյիթ տղա, մեյ խատ էլ զանրկ, որ բիս-բիթիուն պոծնեմ: Ինչ կանդանր որ կասի զանրկ, չէլնի զանես, խետ որ զանես՝ բիրդանն կսաղանա, որ սաղացավ՝ քյե կուտի անպատճառ:

Էսա ճիչ ախպերն ի, առատուն մոր կասի. - Մարե՛, խաց-պանն պե ուտեմ. որ էրթանմ:

Մերն ի, կասի. - Խա՛, քյե մեռնեմ. իմ պալիկս, մկա կպերեմ:

Կէլնի խաց-պանն կպերի, կուտա լաճուն:

Լաճն ի, կուտի, կպոծնի, կէլնի ուր նետ-վանեղ կանի, որ սանքյի պիտի էրթան:

Պստիկ ախպերն ի կպիրի խսիր, ճիչ ախպոր կփանթութի մեչ էտա խսրին. կտանի կտնի դռան իտև:

Էսա կնիյն ի, կէլնի նոր թոներ կվառի. նոր կեր-կերակուր կիփի. որ դև գյան ուտի:

Մեկ էրկու սանհանթից սորա դև կուգյան, կուգյան կէրթան ներս. խետ կնգյանն գյեռ կուտեն, կխմեն, էրթալու գյանխ գյեռ կաց պանրև կանի, որ պիտի էլնի դուս, էսա ճիչ լաճն ի դռան իտևանց ուր նետվանեղ կլանրի, մեյ խատ կթողնի, խետ թողնելուն՝ դողրի մեչ էսա դևու սրտին: Խետ զանելուն դև կինի, որ կինի կբաշլայի չանբալանմիշ էլնել, կդառնա էսա տղին կասի. - Բանբագյիթ տղա, մեյ խատ էլ զարկ, որ խորոտ մեռնեմ:

Էսա տղեն ի, կասի. - Իգյիթի դոբ մեյ կէլնի, էրկու չէլնե:

Էսա դևն ի, կտիսնա որ ճար չկա, չանբալանմիշ կէլնի, չհուր կմեռնի:

Էսա ճիչ լաճն ի, որ կտեսնա դև մեռե պոծե, կպիրի կկոտրտի, կանի կիմա-կիմա. կտանի մեյ խա զատու տեղ, փոսմ կփորի, կխորի դան:

Էսա դևն ի. չանբալանմիշ էլնելու գյանխ կնգյանն կասի. - Կնի՛կ, զիկ որտեղ որ կտանեն խորեն, դյու մեկ իբրեղ ճյուր որ պիրես լցես վեր իմ գյերեզմնին, ես կսաղանամ, կէլնեմ վեր:

Էսա տղեն ի, էսա պանն կլսի, ջանդանկ կտանի ընկուն տեղ կխորի, որ ուր մեր չի տիսնա:

Կընցնի ընկնա քյանիմ տարի, էսա լաճու մերն ի. հան էրթալով կպանրանյնա. կխիվնտնա, ընկուն. որ վեր ոտաց չի կանա կայնե:

Ավուր մեկ էսա ճԻչ լաճն ի. ուր մոր կասի. - Մարե՛. ի՞նչ էլե քյե, որ ըսկնա ՀԻՆ պՀրՀնկ կմանեա. էրթալով ՀԻա կխիվնդնաս, ոտից կինեա:

Մերն ի կասի. - Ա բալամ. ես էլ չեմ գիտե ի՞նչ ի. շատ խեքիմներաց կյնացի, զիկ ասին՝ թե որ էրթաս դնու գյերեզմանից ափըմ խող պիրես ես ուտեմ՝կժըրեմ:

Լաճն ի կասի. - Մարե՛. էդ էլ պա՞ն ի. կայնի էրթամ պիրեմ:

Էսա լաճն ի. որ կէրթա դնու գյերեզմնից խող պիտի աանի պիրի. էսա մերն ի կելնի ուրինց տանիս. տիսնա խինքյ որ տեղն ի դնու գյերեզման. որ էն մեկէլ օր առնի իբրեղմ ճԻուր էրթա գցի վեր գյերեզմնին, որ դև սաղանա:

Էսա ճԻչ լաճն ի կէրթա դնու գյերեզմընից մեկ ափ խող կառնի կուգյա կուտա ուր մոր կասի. - Մարե՛, դե առ. էսա չի՞ քյո ուզած:

Էդա խող ըսկուն պան էր. որ վով որ ուտի բիրդան կմեռնի:

Էսա մերն ի կպերի էսա դնու խոդից իրեքյ խատ գյամթա կշինի, մեյ խատ էլ ճԻչ կանի. որ նշան էլնի տա ճԻչ լաճուն. կպիրի իդոր մեջ էդա դնու գյերեզմնի խող կլցի, խմոր կուտա վերեն. կելնի թոնիր կվառի. կթխի էդա գյամթեքյ, որ տա լաճուն ուտի, որ մեռնի, ինքյ մեկ իբրեղ ճԻուր կառնի կէրթա թափի վեր դնու գյերեզմնին. որ դև սաղացուցե:

Էսա պստիկ տղեն ի. որ կտեսնա մոր արած թխելու գյախ՝ էդա գյամթի մեջ, որ դնու խող լցրեց՝ կխճի վերէն, նշան կանի:

Մերն ի կթխի կպոծնի, թոնրից կխանի, կտանի մառան. որ իրիկուն գյա տղին տա ուտի:

Իրիկուն ի էսս լաճ կուգյա. շատ անութի կելնի. կասի. - Մարե՛, ես անութի եմ. ինչ ես թխե, պե ուտինք:

Մերն ի կասի. - Խա. բալամ. քո մեր մեռնի քե, քե խամար էսօր գյամթա եմ թխե:

Լաճն ի կասի. - Դե պե, ուտենք:

Մերն է կէլնի կերթա մառնից իրեք գյամթեն կառնի կուգյա. էդա ճԻչ որ դնու խող կա մեջ կուտա ճԻչ լաճուն. էն մեկէլներ մեկ ուր կպախի. էն մեկէլն էլ կուտա պստիկ լաճուն:

Էսա պստիկ լաճն ի, որ կտիսնա ուր նշանած, որ բիթԻն ճԻչին ի տվեր, ուր ախպոր կզանի համան ձեռքներաց կխլի կառնի. կասի՝ թողեք ե՛ս պաժնեմ:

Էսա ճԻչ տղեն ի կասի. - Ախպե՛ր, ինչի՞ էտասկնա արիր, Է՛, ախր ես անութի եմ, Է՛, շուտ արա ինչ որ կանես:

Պստիկ ախպերն ի, կառնի գյամթեքյ առաճ ճԻչ կուտա մոր. կասի. - Մեր բիթունից ճԻչ ի, հաղն ի, որ էսա ճԻչ ինոր տանքյ, մեր մոր կխասնի:

Ինորից քիչ պստիկ կուտա ուր ախպոր, իսկ զմեռնից պստիկ կպախի ուր. կասի՝ հՀաղն ըսկնա ես:

Կառնեն գյեռ կբաշլայեն ուտել մե մեկ ուր գյաթեքյ. համան մեր որ կտիսնա դևի խողով գյամթեն ուրն ին տվե. չի ոսոե:

Պստիկ ախպերն ի, կտիսնա որ մեր չուտե ուր գյամթեն, կասի.

- Մա՛. ինչի՞ չես ուտե:

Մերն ի կասի. - Դյուր չի գյա որ ուտեմ, էսօր իշթաղ չունեմ, չեմ կիտե ի՞նչ էլե, էլմ էլ, չեմ կիտե խիվանդ եմ. ի՞նչ եմ:

Պստիկ ախպերն ի, կասի չէլնե, որ չէլնե, պիտի կտրես մեկ կտոր, պիտի ուտես, ի՞նչխ կէլնի. որ մենքյ ոսոենքյ, էն նստի իրիշկա:

Պստիկ ախպերն ի, շատ կզոոի, որ մեյ թիչյն առնի, ամաև ի՞նչ կանդնար որ կանի. ճար չէլնե, մեր չուտե. որ չուտե:

Ճիչ ախպերն ի, պստիկ ախպոր կասի. - Ինչի՞ կզոռես. որ չոսոռ:

Պստիկ ախպերն ի, կասի. - Զէ՛, իլմքյ պիտի ուտի, չէլնե որ չուտի, ի՞նչխ կէլնի. որ տան մեչ նստինքյ, մեղդյմ. մեղ ուտի, մեղն նստի իրիշկա, չէլնի, պիտի մեղ կտոր ուտի, խո չի՞ ծակե ուր փոր:

Ճիչ ախպերն էլ կզոռի, կասի. - Մարե՛, դե՛ դյու եէլ մեղ կտոր փոթու տիր պերանդ, մեր պստիկ ախպոր խաթր մի կոտրե, խո փորդ չի՞ ծակե:

Մերն ի, կտիսնա որ էլ ճար չկա, կասի. - Մեղ կտոր փոթուցեմ. բարեմ տնեմ պերանս խենքյ ի՞նչ կէլնի, - Լասի: Գյաթից մեղ կտոր կփոթուցի, կտնի պերան: Կուտի կպոծնի, քիչմ կմնա, էսա կնիկ յավաշ-յավաշ կբաշլայի ուտեղ. կոտի. կոտի. համան բիրդան կպատոռի, կէլնի խազար կտոր:

Ճիչ ախպերն ի, որ կտիսնա մեր ընկնա էլավ, պատռավ, համան կխասնի մեկ էրկու սիլլա կթալի ուր պստիկ ախպոր իրեսի մեչ. կասի. - Էսա ի՞նչ ալեա խանեցիր իմ գյլեռխ, էսա ի՞նչ արիր:

Ճիչ ախպերն ի, որ կզմնի ախպոր իրեսի մեչ, ախպոր խելքյ կէրթմ. կինի էնտեղ: Որ կտիսնա ինգյմվ էնտեղ, էլ մոր կթողնի կէրթմ շոտ ճյուր կպերի, կզմնի ախպոր իրես. խելքյ կպերի վերեն, կառնի կտնի գյիքյ. կպաքյի, կտառնա կասի. - Ա՛խր, ինչի՞ ընկնա արիր է:

Պստիկ ախպերն ի, որ խելքյ կուգյմ գյլեռխ, կտառնա ախպոր կասի. - Ախպե՛ր, ինոր ի՞նչ որ էլավ տեղն էր, դյու ալմ չես կիտե, թե ի՞նչ էլե: Կասի, կտառնա ախպոր կբաշլայի պատմել, թե էն ճիչ գյաթեն, որ մնմնճ տվեց քյե, ինոր մեչ դևու խող կեր լցուկ: Իտուր քյե, որ ուտեր՝ մեռներ: Ես էլ դատաստան անելու խամար արեցի, նոր թմզմ պմժնեցի, էն տվի ինոր, որ ուտեր ու գյլեռխ գյեր էն, որ քյո գյլեռխ պիտի գյեր:

Ճիչ ախպերն ի, որ էսա պմն կլսի, կպոնի ախպոր ճակատ կպմքյի, կտմնոնա մոր շանդկի կտորներ կժողվի կտանի դևու խետ կխորի, կտառնա կուգյմ տուն:

Էսասկնա կընցնի ժամանակմ, էսա էրկու ախպեր իրար խետ կապրեն:

Ավուր մեկ էսա ճիչ տղեն ի, էլմ էլ ուր սմնմնիթին կէրթմ, էլմ էլ ուր ավջութեն: Մեկ օր դաշտի մեչ կտիսնա մեղ խատ խմզալ, նետվաղեղ քյաշի, որ զմնի, էսա խմզալ բիրդմն կփախի, որ կփախի, էսա լաճ կինի իտև: Խմզալ կփախի, էսա լաճ կինի իտև, էն կփախի էս կլմրի, էն կփախի, էս կլմրի, կէրթմ, կէրթմ, կէրթմ, կմտնի մեղ խատ չադրիմ մեչ:

Էսա լաճն ի, որ շատ կլմրի էսա խմզալի իտև, կտիսնա, որ կնմց մտավ մեղ խատ չադրիմ մեչ, էլ չինգյմ իտև: Տեսավ էդա տեղ մեղ խատ խորոտ ավուզմ, մեչն էլ խմզար ճղանի շմտոնմվան կթմլի: Ինքյն էլ կմյմթ նեղացե. քյրտնե, կնստի էդա ավուզի քյարի վերեն, որ խանքյ կառնի, քյրտինքյ կչորանա, կէլնի էդա պաղ ճրից էլ կխմի, կպառկի էդա տեղ, քյիչմ գյմխ կքյնի:

Էսա խմզալն ի, որ խանքյակտոր կէրթմ կմտնի էդա չադր, էդա չադր մ՚ասե, որ մեղ խատ ճիչ դևու չադր ի: Էդա չադրի մեչն էլ էդա դևու ախչիկ նստուկ էլե, որ էսա ախչիկ կտիսնա ուր խմզալի խանքյակտոր չադր մտնել, կասի. - Աչեբա՜, էսա վո՞վ էլե, որ իմ խմզալի իտև ինգյե: Կասի, չադրից կէլնի դյուս, կիրիշկա, կտիսնա, որ ուրենց ավուզի կուշտ գյեռ մարթմ կա կայնուկ:

Էսա ախչիյն ի, որ կտիսնա էսա տղին զատամանց կասի՝ մեղ խատ պիտի էրթմմ տեսնամ խենքյ էսա վո՞վ ի, որ իկե մեր խող, որ խավքյն ուր պոուտով, օցն ուր փորով չէր կանե գյե ըստեղ:

Էսա ախչիյն ի, կէլնի մեյ խատ փառչ կառնի կէրթա. որ էրթա ավազանից ճյուր պիրի, համդա էլ տեսնա խենքյ էսա ի՞նչ մարթ ի, որ իկե ուրենց խող:

Ախչիյն ի, փառչ կառնի, կուգյմ, որ ճյուր պիրի, կմոտոխասնա, կտիսնա, որ մեյ խատ սիրուն բմբագյիթ տղեմ գյեռ ավմզանի մոտ կայնե, քնուց էլե վեր, լվացվե, կտրպվի:

Էսա ախչիյն ի, որ էսա լաճուն կտիսնա, խելքյ կթալի վերեն:

Էսա լաճու աչկն էլ խետ կինի էսա ախչկան իրես, կտիսնա ախչկան խորոտկութեն. խելքյ կէրթմ, կինի դմ:

Ախչիյն ի, որ կտիսնա էսա լաճու խելքյ կնաց, կխասնի ճյուր կզմնի երես, ուր ջուխտ ծծեր կխանի կպոտի վեր էսա լաճու իրեսներաց. չհուր խմզմր սև հմլով կխանի վեր:

Էսա ախչիյն ի, կտիսնա որ լաճու խելքյ էկավ վերեն, կտառնա կասի. - Այ բաբագյիթ տղա, դյու ի՞նչխ ես իկե էսա խող, որ օցն ուր պոոտով, խավքյն ուր թիվով չէր կանե գյե, - էլմէլ կդառնա էսա տղին կասի, - էսա խող որ կա՝ դևու խող ի, մարթ չի կանա էնա խող մտնե, դյու ի՞նչխ ես իկե:

Էսա լաճն ի, կասի. - Ես էլ չեմ կիտե գյեռ էկա ինգյա:

Ախչիյն ի, կասի. - Կիտես ի՞նչ կա: Բաբաագյիթ տղա, ես որ էկա մոտոխասցա քյե, տեսա, ես զմրկվա քյե, ես քյե պիտի առնեմ, դյու ի՞նչ կասես. խոսկ կուտա՞ս:

Էսա լաճն ի, կասի. - Ես էլ քյե զմրկվա, դյու որ կուզես, ես պան չունեմ ասելու:

Իսոր վերեն կխանեն մեկ-մեկելու մատնեկ կմտուցեն, կնշանվեն:

Էսա ախչիյն ի կտիսնա, որ ուր սրտի ուզածն էլավ, կդառնա էսա լաճուն կասի. - Իմ բմբագյիթ նշանած. էսա խող որ կա՝ դևու խող ի, մարթ խողածին էսա խողի մեչ չի կանա մնա: Խավքյն ուր պոոտով չի կանա էսա խողի իրես էլնե, մկա դյուն էլ չէր կանի մնե, համան էն որ ես քյե ուզեցի, զմեն պան քյե խամար խանգյստացավ:

Ախչիյն ի, կասի. - Քանի որ էսասկնա էլավ, ես քյե կասեմ զմեն պանն, կիմցուցեմ, որ վերճ մենքյ ըոհաթ ապրենքյ:

Կասի. - Կիտե՞ս ինչ կա, իրիշկա տե՛ս էնա չադր, որ չէրևա, էն իմ խոր չադրն ի, իմ խեր մկա էնտեղ քյներ ի, նոր էսօր թմզմ քյներ ի, մլմ չյուր յոթ օր, յոթ կիշեր, յոթ սահաթ պիտի քյնի, նոր էլնի վեր: Եփ որ էլնի վեր, չի կանա՝ չուր ես մեյ խատ խոփ չտայցուցեմ, դնեմ վեր ինոր փորին, չի կանա էլնե վեր:

Էսա ախչիյն ի, կասի. - Ես կուզեմ խանգյիստ ապրեմ, մեյ մարթ իմ վերեն խմբմր չի տա, իտոր խամար էլ ես կուզեմ, որ իմ խեր մեռնի, զմթի պատվյեր ի, էլ չեմ ուզե մնմ: Ինոր վոշ առնելու խամար կիտե՞ս ի՞նչ պիտի անես: Էն չադր կտեսնա՞ս, էն չադրից խարիր առրմ էնտեխ կպերես յոթ խատ պողպտե խաստ ցից, կզմնես խարեր առրմ էնտեխ, խորս չադրից կդառնա մեյ խատ ուրիշ տեսակ չադրմ, կքմշես վերեն ըսկուն, որ մեր չադրի նմուշ չէլնի: Եփ դև կէլնի վեր կտիսնա, որ ինքյ ուր չադրի մեչ չի՝ բիրդմն կթյոզնա, որ թյոզցավ ուր կես ուշ կէրթմ, որ էն յոթ էրկթե խաստ ցցերն էլ տիսնա, դհա կթյուլնա, ըսկուն, որ մեյ խատ էլ դյու գյաս ասես՝ դև կոիվ կուզեմ՝ զաթի բիսբիթհուն կպոծնի, էլ վոշ չի մնա մեչ: Էն գյմխ կուգյաքյ կսպանեքյ, մենքյ էլ խանգյեստ կապրենքյ:

Էսա ճհչ տղեն ի, կասի. - Ի՞նչխ կէլնի էդասկնա պանն, քյո խեր ի՞նչխ մորթենքյ, մե յարամիշ կէլնի:

Ախչիյն ի, կասի. - ՉԷ՛, թե որ խերս սաղ մնաց, օրմ չէ օրմ քյո հաղ շատ ֆմնմ

կէլնի, ավատա. ես կուզեմ, որ խերս մեռնի: Դևու ցեղ ի. մեկ օր չէ, մեկ օր գնարարմ կուտա:

Էսա ճոչ տղեն ի. որ կտիսնա էսա ախչկան ասածներ. ինքյ էլ չի կանա վազ գյա էսա ախչկան մոտեն, կասի. - Աղե՛կ, իմ հյուրի փնարի, ի՞նչխ կուզես, ըսկուն արա:

Ախչիյն ի. կասի. - Ջյանի որ խոսք տվիր, իմ ասածներ չմոռանաս, որ խազարավոր, փյուրավոր. միլիոնավոր ասքյար էլ թափցուցես պիտի չկանաս հաղթել իմ խոր, թե որ իմ ասածներ չանես, - կդառնա էսա լաճուն կասի, - եփ որ կուգյաքյ կբաշլայեքյ անել, կտիսնաք. որ զոռ կինեքյ. էնգյախ առ էսա մազ, կուտաս կրակ. իմ փայխի մեջ իրեք խատ թևավոր խրեղեն ծի կա. կուզյան քյե հեռքյ, քյե կառնեն կփախցուցեն:

Էսա լաճն ի, կասի. - Թե որ ես չկարցա, իմ պստիկ ախպեր Դյունյա Ջալաբին կանա անե էդա պան, էն էլ ապա դևու ցեղ ի:

Էսա ախչիյն ի, որ կլսի էսա լաճու պստիկ ախպոր դևու ցեղ էլնել. կասի. - Մնդամ, որ քյո ախպերն էլ դևու ցեղեն ի, կանա անե էսա պան:

Պստիկ ախպերն ի, որ կլսի ախպոր արած էլածներ, կասի.

- Ախպե՛ր, քյանի որ խոսքյ ես տվե. մնոախ մա՛նե:

Կասի. կէլնի յոթ խատ խաստ էրկթե ցից կուտա շինել չադրի խամար, մեյ խատ էլ ուրիշ տեսակ չադր կառնի, կդառնա ճոչ ախպոր կասի. - Դե՛, էլի էրթանքյ:

Կէլնեն էսա ճոչ ախպերն ի խետ պստիկ ախպոր, ինչ որ լազմ ի, կժողվեն կառնեն, կէրթան չուր էդա դևու խող:

Որ կխասնեն դևու խող, կմտնեն կէրթան, կէրթան, չուր կխասնեն էսա դևու չադրի մոտ:

Էսա պստիկ ախպերն ի, կպիրի խարիր աղըմ զատ էդա յոթ խաստ էրկթե ցցեր կզանի գյետին. էդա պիրած չադրն էլ կքյանշի վերեն: Սորա կդառնա դևու չադր կքյակի, մենակ ցցեր կթողնի դենստեղ: Կդառնա դևուն կպոնի ուր յաթղով-մաթղով կտանե կդնե էդա թանզա չադրի մեջ: Կդառնա կուգյան ուր ախպոր խետ կկայնեն վեր ավուզին, չուր դևու վեր էլնել:

Էսա դևու օրն իկե. յոթ օր պոծե, համան կտիսնա, որ խոտ վեր փորին դրող չկա, գյեռ յավաշ-յավաշ կէլնի վեր, աչկեր կպանան, աչկեր որ կպանան՝ կտիսնա. որ ուր չադրի մեջ չի, կես ջան կթողնա. իր վոժի կես կէրթա: Մեյ խատ էլ կիրիշկա, կտիսնա, որ ուր չադրի ցցերն ի մենակ մնացե, էնտեղ կեսն էլ կթողնա: Մեկ էլ կտիսնա, որ սար քյար բիթուն անքյար պոնե, բիսբիթուն կթողնա, կպոծնի:

Դյունյա Ջալաբին ի. որ կտիսնա դև էլե վիր՝ ախպոր խետ կվանզեն, որ էդա հալի մեջ պոնեն սպանեն: Որ խասնեն դևու չադրի մոտ, էսա Դյունյա Ջանլաբին կվանզի, կընցնի ուր ճոչ ախպոր ատանճ, կասի ճոչ ախպոր. - Դյու կաց ետև, ես դևու ջնա եմ, ես կանամ մենակ ինոր խետ գյլեռխ էլնե, դյու չես կանա: Դյու կայնե զատ. թամաշա արա:

Դյունյա Ջանլաբին ի կտեսնա, որ դև բիսբիթուն վոժից ինգյե, համան կէրթա բիրդան կկայնի էսա դևու ատանճ, կասի. - Կոիվ կուզեմ, կոիվ:

Էսա դևն ի, խետ էսա պանն էլ կլսի, զաթի բիսբիթուն կթողնա, կպոծնի:

Էն գյախն ինե Դյունյա Ջանլաբին կխասնի կքյանշի ուր թուր, կզանի մեջ գյլխուն, կանի էրկու կտոր. կտանի զատ սարիմ գյլեռխ կխորի: Ըսկուն տեղ տարավ, որ ախչիկ հան դիժարլամիշ չէլնի, էրթա վերեն լան:

Էսա լաճերն ին. դևուն սպանեղուց սորա կէրթան ուրենց տուն-տեղ կպերեն էսա դևու խողի մեչ կնստեն:

Խարսնիս կանեն յոթ օր. յոթ կիշեր. էսա ճիչ լաճ ինան դևու ախչիկ կպսայվեն:

Կընցնի ըսկնա մեյ ժամանակ. մեկ օր էսա լաճու կնիյն ի Դյունյա Ջալաբուն կասի. - Դյունյա Ջանլանբի. քյո օրն իկե. խերիքյ ի առանց պսայվել մնաս, արե քյե պիտի պսակենքյ:

Դյունյա Ջանլանբին ի. կասի. - Չէ՛, թե որ իմ ուզած կէլնի՝ կպսայվիմ, թե որ չէ՝ նա՛ կպսայվիմ, նա՛ պան:

Էսա կնիյն ի կասի. - Ո՞րն ի քյո ուզած. որ էտասկնա զոռ կճարվի:

Դյունյա Ջանլանբին ի. կասի. - Իմ ուզած Ձեզչեզի պերթի մոտի էն պանցր սուրուխ քյարի վերվի ախչիյն ի:

Էսա ախպոր կնիյն ի, կիտի ինչ ախչկան խետն ի. էսա լաճուն էլ. իր տեքյրոչ շատ կուզեր, կիտեր, որ շատ կտրիճ բաբազյիթ տղա էի, կասի. - Թող քյո ուզած էն էլնի, մենակ թե դյու պսայվի: Համան քյե պամ ասեմ. էն ախչիկ պերել քիչմ զոռն ի, դյու արե ինորից վազ կաց. էրթանքյ ուրիշմ պիրենքյ:

Էսա լաճն ի, կասի. - Չէ՛, որ չէ՛, ես էն ախչիկ կուզեմ, իլնքյ որ բիլաքյ:

Էսա կնիյն ի, կտիսնա որ ճար չկա, չի կանա ուր տեքյոր կանդրմիշ անե. ճարահատած կասի. - Դե՛. դու կիտես, մենակ թե եփ որ կէրթաս էդա ախչկան ուզելու. զիկ ասա, որ օր կէրթաս. որ ես էն օր ռամ թալեմ, քյո աստղ իրիշկամ, տեսնամ քյանի որ քյո աստղ պայծառ ի՝ աղեկ. իսկ թե որ բաշլայից խավարել. էն գյանխ ես կիմնամ: Համան դյուն էլ էսս մազ կուտաս կրակ՝ կկանչես քյո ճիչ ախպոր վեր Բանզիկ ծիյուն. էն գյանխ մնքյ կխասնենքյ քյե կազատենքյ:

Էսա լաճն ի կէլնի ուր սև ծիհ-կխեծնի, սև շորեր կխայնի, կէլնի կինի ճամբախ: Կէրթա՛ն, կէրթա՛ն, շատ կէրթա՛ն, քիչ կէրթա՛ն, կէրթա՛ն կխասնի մեյ խատ քյաղքյի մոտ, որ կխասնի, ալնա չխասած քյաղքյին. կտիսնա որ քյաղքյի կշտի պերթի մոտ, մեյ խատ սուրուխ պանցր քյարիմ գյլեռխ ախչիյմ գյեռ նստե:

Էսա լաճն ի. կուգյան կխասնի էդա քյարի մոտ, մեյ խատ կբոռա. որ կբոռա, էսա քյարի վերվի ախչիկ կասի. - Ի՞նչ կուզես:

Էսա լաճն ի, կասի. - Ես կուզեմ քյե, որ էճնես տակ, գյանս իմ ծիյու թարքյ. էրթանքյ էնտեղ, որտեղից որ ես կուգյամ:

Էսա ախչիյն ի. քյարի գյլխուց մեյ խատ վեր էսա լաճուն կբոռա, խետ որ կբոռա. էսա լաճու ծիհ կդառնա թամխով քյար:

Էսա լաճն ի, շատ չապանլանմիշ կէլնի. որ ծիհ իրար գյա, անկարելի կէլնի:

Էսա քյարի վերվի ախչիկ մեյ խատ էլ կբոռա վեր էսա Դյունյա Ջանլանբին. խետ որ կբոռա, համան Դյունյա Ջալաբու ոտքեր չուր փոր կդառնա քյար:

Դյունյա Ջանլանբու ախպոր կնիյն ի, Դյունյա Ջանլանբին եփ ինքյե ճանմբանխ, էն օրվանից կբաշլայե ինոր աստղ իրիշկալ, կտիսնա որ էրթալով հա էսա աստղ կխավարի:

Դյունյա Ջանլանբին ի. կտիսնա. որ չէ՝ ուր պանն պոծեր ի, համան մազ կուտա կրակ. կասի. - Բանզիկ. դո՞ր ես. քյո վերեն խեծնալի խետ խասի:

Դյունյա Ջանլանբու ախպոր կնիյն ի, կտիսնա որ իսոր աստղ բիսբիթուն խավարավ, հասման կէլնի Բազիկ ծիհ կխեծնի. ուր մարթու խետ կխասնի Դյունյա Ջանլանբուն հետքյ:

Խետ որ կխասնի մոտ Դյունյա Ջանլանբին. կտիսնա որ Դյունյա Ջանլանբին

քյարացե, մենակ գյլեոխն ի մնացե: Համան ուր ծեռաց ճպոտ կզանի վեր էդա սուրուխ քյարին, կասի՝ ցածրացիր:

Էդա սուրուխ քյարն ի կամացմ կցածրանա:

Էսա կնիյն ի. մեյ խատ էլ ճպոտ կխասուցի վեր էսա քյարին, կասի՝ էճի չյուր գյետին:

Էսա քյարն ի. կկուրիսի. էսա ախչիկ ըոույտ կկայնի վեր գյետնին:

Էսա ախչիյն ի, կասի. - Ի՞նչ կուզես. ուզի քյո ուզած:

Էսա լաճու կնիյն ի, կասի. - Ես կուզեմ որ էսա լաճ սաղանա:

Էսա ախչիյն ի, կասի. - Թող քյո ուզածն էլնի:

Բիրդան էսա լաճ կսաղանա, համա ծին ալու քյար ի:

Էսա կնիյն ի. ճպոտ կզանի վեր քյարին, կասի. - Կուզեմ, որ ծին էլ վեր կենա:

Էսա ախչիյն ի, կասի. - Թող քյո ուզածն էլնի:

Էսա լաճու ծին էլ կսաղանա, կէլնի կկայնի:

Էսա ախպոր կնիյն ի, կդառնա տեխ ուր տեքյր, կասի. - Էլ ի՞նչ կուզես, Դյունյա Ջնլաբի:

Դյունյա Ջնլնբին ի, կասի. - Ես կուզիմ, որ ըստեղ ի՞նչ կնանդնր որ քյարացածներ կան, որ իմ օրին ին, էլե բիթին էլ սաղանան, էրթան ուրենց տեղեր:

Կնիյն ի, կասի. - Էդ էլ պնա՞ն ի, թող քյո ուզած էդա էլնի:

Ախպոր կնիյն ի, ճպոտ կզանի վեր քյարին, կասի. - Ես կուզեմ, որ էսա խազար ութ խարիր մարթեր սաղանան. էլնեն վեր, էրթան ուրենց տեղեր:

Էսա ախչիյն ի. կասի. - Ուրիշ ի՞նչ կուզես, ուզի՛, քյո ուզած էդա մեյ պնն չի:

Կնիյն ի, կասի. - Ես մենակ էդա կուզեմ:

Ախչիյն ի, կասի. - Թող քյո ուզած էդա էլնի, էդ էլ պնա՞ն ի:

Բիրդան կտիսնա. որ խնզնր ութ խարիր մարթ ուրենց ծիյու խետ որ քյարացիր ին մնացե, կէլնեն բիթին էլ սաղ սնլնմնթ կկայնեն էնտեղ:

Դյունյա Ջնլնբին ի, որ կտիսնա էսա ախչկան խորոտկութեն. կնմանի հյուրի-մնլնքյ՝ խելքյ կէրթա:

Էսա կնիյն ի. կխասնի տեխ Դյունյա Ջնլնբուն, խելքյ կպիրի վերեն, կասի. - Դե էլի վեր տեսնանքյ. խենքյ ի՞նչ պիտի անենքյ:

Դյունյա Ջնլնբու առճև էսա կնիկ մեյ խատ ըսկուն կզնեե վեր էսա ախչկան վզի վերեն, որ էսա ախչիկ խելքյ կէրթն, կինի դնն:

Էսա լաճն ի, կասի. - Ախր ինչի՞ ըսկնա արիր, էսա տեղ կա խնզնր ութ խարիր աչկ վեր էսա ախչկան, դյու ի՞նչխ զարկիր սպանեցիր:

Էսա կնիյն ի, կասի. - Դյու ծենդ կտրի, ալն տես ի՞նչխ կէլնի. էսա ախչիկ չի մեռե, մնոնխ մանե:

Քիչ սորա կտիսնա, որ ախչկան խելքյ էկավ վերեն, համան կոոծկա, որ կոոծկա պերնից մեյ խատ խնզնր գյլխանի ջանավարմ կինի տակ: Էսա ախչիկ կսաղանա էլմ էլ ւսոաճվան պես, չանքյ առաճն էլ խորոտ, խոտն-խրեղեն:

Էսա լաճն ի, որ կտիսնա էսա պնն, շատ կուրախնա:

Էսա կնիյն ի, կասի. - Ըսկուն արե, որ ի՞նչ կնանդնր որ հիլա խուրդա կեր մեչ թափե, դառնա քյո ուզածի պես կնիկ:

Կդառնա էդա ջանավարն էլ կուտա Դյունյա Ջնլնբին կասի. - Ա՛ռ, էս էլ դիր քյո ծոցի կութու մեչ:

Լաճն ի, որ կտիսնա աղորթմանց ախչիկ ավելի խորոտկցավ, կդառնա ուր

ախպոր կնգյան կասի. - Դե՛, մկա ասա, էսա խնձար ութ խարիր խոքյի մարթերաց թող մեկ գյմ իսոր ուզի տանի:

Կնիյն ի, կասի. - Ի՞նչխ, մենքյ ախր քյե խամար ենքյ իկե, էսա զմեն պան, որ արինքյ, քյո սիրուն էր արինքյ, ի՞նչխ էլենենքյ ինոնց ասենքյ, թե՝ որդ կուզեքյ, ուզեքյ, տարեքյ:

Դյունյա Ջնալաբին ի, կասի. - Իսոնքյ զիզնից առած ին իկե, ի՞նչխ որ էլնե ինոնց պիտի խարցուցեմ, թե որ առնող չէլնե, նոր ես կուզեմ:

Կդառնա էսա խնձմր ութ խարիր ծիյավորներաց կբոռա, կասի. - Է՛յ, ախպերներ, ես էկա, որ էսա ախչիկ ուզե, էկա բայց տեսա, որ դյուքյ էլ եք իկե ուզե, դյուքյ զիզնից ծնած եքյ իկե, իսոր խամար ես ծե կասեմ, քյանի որ դյուքյ զիզնից ծնած եքյ իկե, էսա ախչիկ ծե կխասնի, որդ որ կուզեքյ՝ վերուցեքյ:

Էսա խնձմր ութ խարիր ծիյավորներն ի բիթուն մեյդրա կբոռան, կասին. - Մինքյ ինչ կնանդմր որ քյեզնից ծնած ենքյ իկե, էսա ախչիկ ուզե, համան, որ կխարցուցես՝ էսա ախչիկ խալալ էլնե քյե: Մինքյ էկանքյ դառցանքյ քյար, համան դյու էկար էլմէլ մե նոր աշխարհ պիրիր, մենքյ ի՞նչ սրտով էլ էդա ախչիկ քյո ծեռնից առնենքյ. - կասին, բիթուն մեյ տեղ կպոռան, կասին. - Ախչիյ քյոն ի, քյե պիտի կնքյութեն անե:

Կասին, կէլնեն էդա խնձմր ութ խարիր ծիյավորով, խետ նաղարա զուռնեն, կառնեն, կպիրեն ուրենց տուն: Քյառասուն օր, կիշեր-ցերեկ խարսնիս կանեն, ուրախութեն կանեն:

Իսոնքյ խասան ուրենց մուրադին, մենքյ էլ խասնենքյ մեր մուրադին: